ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ
բ.գ.թ., դոցենտ
Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԱՖՈՐԻԶՄՆԵՐԻ ՎԱՐՊԵՏ[1*]

Բանալի բառեր - *Ավ. Իսահակյանը՝ փիլիսոփա բանաստեղծն ու ստեղծագործողը, խտացումների թեմատիկան,անցյալի պատրանք, ապագայի երազանք, ժողովրդական բանարվեստ:*

Համաշխարհային գրականության մեջ քիչ են այն գրողները, ովքեր իրենց ստեղծած աֆորիզմներով (խտացումներ) կարողացել են թափանցել ժողովրդի հոգու և գիտակցության շերտերը՝ դրանք դարձնելով խոսքի և մտքի անբաժան մասեր:

Վ. Շվեբելը նկատել է, որ «լավ» աֆորիզմները հաճելի պատյանում դառը դեղ են, որոնք բուժում են մարդկանց՝ չվնասելով ճաշակը: Այն իմաստության նրբագեղ պար է մեկ տողում, «մտքերի հեղեղ» է՝ սեղմված մի քանի բառի մեջ. այս ժանրը պահանջում է նրբաճաշակ հակիրճություն. «Աֆորիզմները մարդկային մտքի ընդհանրացումներն են՝ դրսևորված ամենափոքր ձևերի մեջ և գալիս են դարերի խորքից»:[2]

Աֆորիզմների մասին խոսելիս հակիրճությունն ու պարզությունը իբրև առավելություն կարևորում է նաև ռուս գրող Լ. Տոլստոյը. «Всё просто слов мало а чуства-много. Настоящая мудрость немногословна…».[3] Իսկ Շեքսպիրը գտնում էր, որ աֆորիզմի համառոտությունը հանճարի ոգին է:

Գտնվելով փիլիսոփայության և գեղարվեստական ստեղծագործության հանգույցում՝ աֆորիզմը ունի որոշակի նրբություններ և դիրք, որոնք էլ կարող են որոշել ամբողջ աֆորիզմի «դեմքն ու ճակատագիրը»: «Գրականության մյուս սեռերի ու տեսակների հետ մեկտեղ, աֆորիզմներն էլ հետագայում, ժողովրդական բանարվեստից առանձնանալով, ձեռք են բերել ինքնուրույն գոյության իրավունք, որպես անհատական ստեղծագործություն»:[4]

Հայ գրականության մեջ աֆորիզմը հազվադեպ ժանր է և գրեթե ու-

1 * Ընդունվել է տպագրության 03.04. 2022 թ.
2 Ինճիկյան Արամ, Ավ. Իսահակյան, Եր.,1977, էջ 63:
3 Горький М., «Избранные произведения», т.2 стр.614.
4 Ինճիկյան Արամ, Ավ. Իսահակյան, Եր.,1977, էջ 63:

սումնասիրված չէ: Ավ. Իսահակյանը՝ փիլիսոփա բանաստեղծն ու ստեղծագործողը, եղել է եզակի գրողներից, ում մտածողությանը բնորոշ է եղել խոսքի խտացումը: Ավելին՝ Վարպետը բացառություն է կազմում. «ոչ մի հայ գրող նրա չափ աֆորիզմներ չի գրել»:[1]

Կարծում ենք՝ 19-20 –րդ դարերի հայ ռահվիրաների՝ Աբովյանի, Նալբանդյանի, Ռաֆֆու, Պարոնյանի, Թումանյանի, Իսահակյանի և այլոց աֆորիզմների ուսումնասիրություններն առավել ցայտուն կներկայացնեն գրողների աշխարհայացքի, կենսափիլիսոփայության էական կողմերը և կնպաստեն այդ ժանրի ազգային յուրահատկությունների պարզաբանմանն ու զարգացմանը: Այս տեսակետից յուրօրինակ աշխատանքներ են Ն.Աղբալյանի, Մ. Բերբերյանի, Էդ. Ջրբաշյանի, Հ. Թամրազյանի Ա. Ինճիկյանի, Ա. Մուշեղյանի, Գ. Աբաջյանի՝ Վարպետին նվիրված արժեքավոր ուսումնասիրությունները, որտեղ գրականագետները անդրադարձել են մեծ մտածողի, փիլիսոփայի, գրողի՝ Ավ. Իսահակյանի մտքերի թռիչքներին, որոնք ժամանակի հոլովույթում ընկալվել են իբրև իմաստություններ, թևավոր խոսքեր, հետո անցել են սերունդներին: Ցանկանում ենք նշել Ավիկ Իսահակյանի «Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ» մեծածավալ աշխատության մասին, որտեղ անխոնջ, իսահակյանապաշտ գրականագետը ոչ միայն հանրագումարել է գրողի խտացումները, այլև դասդասել, վերլուծել և ներկայացրել է Վարպետի անմահ արժեքները՝ խտացումները, որոնք ընթեցողի սրտի թագմանն ու նվիրական իղձերի արտահայտություններ են: Ինչպես նշում է Գ.Աբաջյանը. «ԽՏԱՑՈՒՄՆԵՐ» անվանումը բանաստեղծն է ընտրել. նույնանում է աֆորիզմ, մաքսիմ, թանձրացում, թևավոր խոսք հասկացություններին»:[2]

Իսահակյանի խտացումները հարուստ են մարդկային նուրբ խոհերով ու զգացումներով, բազմազան են արտահայտչական ձևերով. դրանք չեն ապացուցում, չեն վիճում, այլ նրբորեն ազդում են մարդկային սրտի և գիտակցության վրա. «…Կյանք, կյանք և սիրել կյանքը- թափառել, սիրել, մտածել, գործել, խորհել, կռվել. սիրել մայր, հայր, որդիներ ունենալ ընկերներ… Ահա կյանքը- պոեզիա-կյանքը»:[3]

Վարպետը ամեն անգամ իր հոգին փոթորկող տանջագին մտքերի դրսևորման համար գտել է նոր խոսք, նոր ձև, նոր արտահայտչաեղանակ.«Երբ մարդ նայում է այս պայծառ արևին, կանաչ լեռներին, շառա-

1 Իսահակյան Ավիկ, Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ, Երևան, 2001,էջ 475:

2 Աբաջյան Գևորգ, Ավետք Իսահակյանը և հայոց ողբերգությունը, Երևան, 2001, էջ 266:

3 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 270:

չուն, ցոլցլան գետակին, ծաղիկներին, թռչուններին- մոռանում է, թե մահ կա, հիվանդանալ կա...»:[1]

Աֆորիստիկ գրելաոճը, ըստ էության, Ավ.Իսահակյանի ստեղծագործելու նախասիրած ոճն է, նրա խտացումները հանճարեղ հակիրճության բարձրարվեստ նմուշներ են, նրա տողերը հագեցած են փիլիսոփայական խոհերով, տարաբնույթ մտքերով. «Նա սեղմում խտացնում է, և դրանով... չի թուլացնում...»: [2]

Մեր ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Ավ. Իսահակյանի խտացումներն ըստ թեմատիկայի, որոնք ընդգրկում են հայրենի եզերքից մինչև տիեզերք, պատմությունից մինչև իրականություն, անցյալի պատրանքից մինչև ապագայի երազանք հոլովույթը, որոնք մայրենի լեզվի և ժողովրդական բանահյուսության, հայ և համաշխարհային գրականության, արվեստի և գիտության, մարդու և բնության, կյանքի և մահվան, սիրո և տառապանքի թեմաներ են դիտարկում. «Մարդկային հոգեկան զարգացման առաջին քայլը բանաստեղծությամբ է սկսվել, միջին գնացքը գիտությամբ, գաղտնիքը գտնելով պիտի անցնե, իսկ վերջին քայլերը կսկսվեն դարձյալ բանաստեղծությամբ»:[3]

Մեր ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է վերջին տարիներին խտացումների նկատմամբ հետաքրքրությամբ. դա կարելի է բացատրել նրանով, որ աֆորիզմները՝ մտքի հակիրճ արտահայտությունները, կատարելապես համապատասխանում են յուրաքանչյուր ժամանակաշրջանում մարդկային հոգու պահանջներին և հնարավորություն են տալիս գեղարվեստական ձևերով արտահայտել մարդկային վերաբերմունքը իրականության, անհատական և հասարակական կյանքի, հաղորդակցման շրջանակներում.«Մարդկությո՛ւնը սիրիր- մարդկության չափ մեծ կլինես: Տիեզե՛րքը սիրիր, տիեզերքի չափ մեծ կլինես»:[4]

Աշխատանքում ցանկացել ենք ներկայացնել Վարպետի մտքի ընդհանրացումներն ու խոհափիլիսոփայական դիտարկումները, որոնք «եթե կամենանք բծախնդիր ընտրությամբ հավաքել..., ապա կարելի կլինի կազմել մի հաստլիկ հատորյակ շատ օգտակար, ամեն ժամու թերթելու արժանի գիրք»:[5]

Վարպետի խտացումների ներկայացման համար կիրառել ենք վեր-

1 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 447:
2 Ինճիկյան Ա., Ավետիք Իսահակյան, Եր., 1940թ., էջ 52:
3 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 151:
4 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 372:
5 Աբաջյան Գևորգ, Ավետք Իսահակյանը և հայոց ողբերգությունը, Երևան, 2001, էջ 266:

լուծուկան և համադրական, գրականագիտական մեկնության մեթոդները, որոնք հնարավորություն են ընձեռել դիտարկել իսահակյանական խտացումներն ըստ թեմատիկայի. դրանք ցայսօր խորությամբ ուսումնասիրված չեն եղել:

Մեր ներկայացրած խտացումները(աֆորիզմներ)ընտրել և քաղել ենք Իսահակյանի քնարական-փիլիսոփայական օրագիր –խոստովանության՝ «Հիշատակարանի» էջերից, ծոցատետրերից, օրագրերից, «Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ» գործից և ցանկացել ենք ներկայացնել նոր սերնդին. «երիտասարդների համար, կյանքը անվերջ է, հետաքրքրական, գեղեցիկ, կայուն»:[1]

Իսահակյանի մյուս գործերի նման խտացումները ևս կրում են նրա՝ որպես մտածողի և արվեստագետի, անհատականության խոր դրոշմը. «Իր ասույթներից մեկում Իսահակյանը գրական երկի կարևոր մի հատկանիշը համարում է մտքի և զգացմունքի ներդաշնակումը: Գրողը պիտի կարողանա ամեն մի զգացմունքի տակ դնել մտածումը և ամեն մտածումի տակ՝ վառ զգացումը»:[2] Դրանք Վարպետի անհատականության, յուրօրինակ մտածելակերպի, խորը հուզականության պատկերավոր ներկայացումներ են, «օդային էջեր են, որոնց հիմքում ընկած է խորապես վերապրած հուշը, զգացումը, մտքի տվայտանքը, փայփայած երազանքը, իղձը...»:[3]

«Բանաստեղծը պիտի ոգեշունչ լինի, -գրում է Իսահակյանը,- ոգի տա մարդկանց, ոգևորե...»[4].ահա այդ հոգին հասկանալու, նրա կյանքի և ստեղծագործության ծալքերը թափանցելու համար՝ փորձել ենք խտացումները հավաքագրել թեմատիկ սկզբունքով: Ըստ էության, դրանք այն ստեղծագործական մտահղացումներն են, որոնք հնչել են նրա առաջին գրքում՝ «Երգեր ու վերքերում»՝ դառնալով հիմնաքար հետագա գործերի համար: Թեմատիկան բազմազան է և մեկ աշխատանքում հնարավոր չէ ընդգրկել ամբողջը, այնուամենայնիվ փորձել ենք ներկայացնել հայրենի բնաշխարհի, հայ հանճարեղ ժողովրդի, տիեզերք ու աշխարհ հավերժական կառույցի, մարդ- անհատի կյանքի խորը փիլիսոփայության, բնության անխախտ օրենքների՝ կյանքի ու մահվան մոտիվները:

Իսահակյանի հայրենասիրական խտացումներում հայրենիքը երևում է որպես գաղափար, ապա փոխաձևում մաքրամաքուր զգացմունքի և հոգևոր արժեքի: Վարպետը հայրենիքը ընկալում է հարազատ օջախի

1 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 385:
2 Ինճիկյան Արամ, Ավ. Իսահակյան, Եր.,1977, էջ 66:
3 Նույն տեղում:
4 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 247:

ծխի հավերժական իմաստությամբ, արահետների ու լեռների կարոտի փիլիսոփայությամբ, դաշտերի ու արոտների արևափայլ լույսով: Բեռլինում ապրելու տարիներին գրողը ոչինչ չի տենչում ո՛չ փառք, ո՛չ համբավ, ո՛չ փող, միայն երջանիկ կլիներ նստել իրենց տան պատի տակ՝ հոր նստած տեղը և գլխի վրա զգար մոր օջախի ծուխը. «Նորից հայրենի հողի վրա…, ուր առաջին ծաղիկը քաղեցի և հավերժական աստղերը տեսա»:[1]

Ավետիք Իսահակյանի խտացումների ստեղծման ամենազորեղ ներշնչողն ու ուսուցիչը, ուղղորդողը եղել են այս բարձր արժեքները.«Ինձ առաջնորդ են՝ բնությունը, ժողովուրդը և հին կուլտուրան»:[2]

Նա զգացմունքների խորությամբ, մտածողության նրբությամբ, անձնադրոշմ հրապույրով ստեղծեց հայրենասիրական անջնջելի մոտիվներ, նա մեծարեց ու փառաբանեց իր ժողովրդին.«Դու լույսի , ազնիվի և մաքրության ջրաբաշխ, որ քո լեռներից սահանքում են գետերդ՝ տանելով և սփռելով բարբարոսների հողերի վրա բարություն և օրհնություն»:[3]

Իսահակյանը ադամանդե լեռների, հավերժական սյուների վրա կանգնած երկնասույզ, փիրուզե Հայաստան աշխարհը համեմատում է անպարտելի, առաքինի նահապետի հետ, կանգուն Մասիսի հետ և լինելով հարազատ ժողովրդի շահերի պաշտպանը պատգամում է.«Իմ ժողովուրդ, գոտիդ կապի՛ր, և հավատարի՛մ մնա դու քեզ…»:[4]

Գրողը հայրենիքի ճակատագրի մեջ տեսնում է իր ճակատագիրը, հոգու բոլոր ելևէջները՝ սերը, կարոտը, երջանկությունը, թախիծը: Հայացքը հառած Ալագյազին ու Մանթաշին՝ շնչում է հովերի ու ծաղկած հովիտների անուշ բույրը և գրում. «Դո՛ւ չես մեռել, դու անմա՛հ ես, դու ինքդ անմահություն ես և հավերժական գաղափար»:[5]

Մենք տեսնում ենք հարուստ ներաշխարհով բանաստեղծ-փիլիսոփային, որի հույզերն ու մտորումները երևում են նրա սքանչելի խտացումներից: «Իր լավագույն հույզերով ու խոհերով միշտ եղել է ժողովուրդի հետ…»[6].նա սիրում է, ընդվզում, տառապում, թախծում ու հրճվում ինչպես իր ժողովուրդը և փիլիսոփայում է իր իմաստուն ժողովուրդի նման.«Իմ սո՛ւրբ ժողովուրդ, ես սիրում եմ, ես պաշտում եմ քո խավար խրճիթները, արտասվաթոր հացը…քո փլատակ վանքի ամեն մի փշրված քանդակը և համբուրում եմ նրանց սրբազան մամուռը»:[7]

1 Նույն տեղում, էջ 312:
2 Նույն տեղում, էջ 172
3 Նույն տեղում, էջ 322:
4 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 324:
5 Նույն տեղում, էջ 323:
6 Ինճիկյան Արամ, Ավետիք Իսահակյան, Եր.,1940, էջ 6:
7 Նույն տեղում, էջ 322:

Այնքան է մեծարում հայրենի եզերքը, որ ցանկանում է.«Իմ գերեզմանը Արազի ափին լինի, Արարատի դաշտում, որ հովերը Մասսից ու Արագածից գրկախառնվեն ու շիրիմիս վրա փռվեն…»:[1]

Այսպիսի խտացումները մաքրագործված հայ կյանքի առասպելներ են՝ ժողովրդական ավանդույթներով, բարքերով. Իսահակյանը մեծագույն հայրենասեր է, յուրօրինակ մտածող, գրող՝ որի «գործին մեջ հայկական գոյնն ու շեշտը կը տիրապետեն»[2], որի մտքով ու խոհով զորեղ տողերում անհնար է բառ ավելացնել կամ պակասեցնել. «Մեր վերնաշենքը բարձր է, այնքան բարձր է, որ հեռվից, շատ հեռվից մարդիկ տեսնում են այդ շենքի բարձունքները– գագաթները՝ ամեն ասպարեզի վրա-լինի պոեզիա, թե նկարչության, լինի ճարտարապետություն, թե երաժշտություն. թեև մենք քանակով փոքր ենք, բայց մեծ ենք և հարուստ»,-[3] գրում է նա՝ ազգային մտքերով տոգորված:

Իսահակյանի աշխարհայացքի ձևավորմանը և խոհափիլիսոփայական թեմատիկայով խտացումներ ստեղծելուն մեծապես նպաստել են Լև Տոլստոյի, Լարոշֆուկոյի,Մոնտենի, Ֆրիդրիխ Նիցշեի հայացքներն ու գործերը: Ուսումնասիրելով Նիցշեի «Այսպես էր խոսում Զրադաշտը» խտացումներ հիշեցնող խոհական գրառումները և անդրադառնալով իր երիտասարդության շրջանի մտորումներներին ու ազդեցություններին՝ Իսահակյանը խոստովանում էր, որ իրեն գրավել է ոչ այքան փիլիսոփա-Նիցշեն, որքան գրող- Նիցշեն՝ իր կուռ, աֆորիզմային ոճով.«Ամեն գրող… ուժեղ է և ազդեցիկ, երբ նրա խօսքը…չունի կեղծ շեշտ և արհեստական ձև. նա ուժեղ է և ազդեցիկ, երբ վերարտադրում է այն, ինչ իր հոգու և մտածողութեան հարազատ և անկեղծ արգասիքն է…»:[4]

Վարպետը բարձր է գնահատել խորը փիլիսոփայական գաղափարներով հագեցած նիցշեական գրելաոճը: Նա անգամ ծրագրել էր թարգմանել փիլիսոփայի գործերից, հավաստելով, որ Նիցշեն խտացումներ գրելու հրաշալի վարպետ է: Նիցշեական ազդեցությունը երևում է Իսահակյան փիլիսոփայի գրեթե բոլոր գործերում. հանճարեղ մտքերը զարմանալի խտությամբ ու սեղմությամբ գրողը խտացումներ է ստեղծել իր ողջ կյանքի ընթացքում. «Թշվառ, պստիկ մարդիկ միայն ձկի պես ներկայով են ապրում … Հավիտենականությունը նրաց համար փակ է, նրանք չեն սավառնում անհունության ալիքների մեջ … Միայն ակնթարթային

1 Նույն տեղում, էջ 266:

2 Չօպանեան Ա., Դէմքեր. Աւետիք Իսահակեան, «Անահիտ», Փարիզ, 1936, №4, էջ 49:

3 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 447:

4 Ֆրանգեան Ե., Ֆ. Նիցշէ եւ նրա փիլիսօփայութիւնը, Թիֆլիս, 1910թ., էջ 23:

հաճույքներ, բավականություններ, ներվերի գրգիռներ, և ոչ հավիտենական երազ, հիացմունք ...»:[1]

Իսահակյանը երդվում է. կամքի հզոր ուժով հաղթելով խոչընդոտներն ու արգելքները, արհամարելով աշխարհիկ, թովիչ կյանքը՝ բարձրանալ անհաղթ ու ճշմարիտ գիտության գագաթը.«Թո՛ղ իմ կյանքը լինի գիտության համար և ո՛չ գիտությունը իմ կյանքի...»:[2]

Վարպետը իրապես բարձրարվեստ ստեղծագործող է: Նա ուսումնասիրել է իր մտածողությանը հոգեհարազատ անցյալի և իր ժամանակի մեծ գրողների, փիլիսոփաների, քաղաքական գործիչների խտացումները, նաև հին աշխարհի, հատկապես՝ Արևելքի ժողովուրդների բանահյուսական իմաստությունները, նրանց արվեստն ու կուլտուրան, «հին հունական և հռոմեական գրականությունն ու միֆոլոգիան, պարսկական էպոսն ու պոեզիան, հնդկական միֆոլոգիան, գերմանական, ֆրանսիական, անգլիական, ռուսական ժողովուրդների գրականությունը, փիլիսոփայությունն ու պատմությունը»:[3]

Մեծագույն հիացմունք է պատճառում քսան տարին հազիվ բոլորած երիտասարդ գրողի հաստատակամությունը, ով անշեղորեն ընթանում է դեպի առաջադիր նպատակը, ուսումնասիրում Շեքսպիրի, Լառոշֆուկոյի, Գյոթեի, Հայնեի, Շոպենհաուերի, Նիցշեի, Պուշկինի և այլոց խտացումները, խորանում, առեղծվածներով ու հակասություններով լի քաղաքական ու հասարակական կյանքի շերտերը: Գրողի կարծիքով՝ առաջավոր հանճարները միշտ էլ երազել ու փորձել են ստեղծել ներդաշնակ մի աշխարհ, որտեղ չլինեն ոճիրներ, սպանություններ, պատերազմներ, որտեղ մարդը լինի ազատ, չշահագործվի, ապրի երջանիկ: Գևորգյան ճեմարանի սանը այս մտքերի ազդեցության տակ 1891 թ. գրում է.«Ապրել, գործել հօգուտ հասարակության, ա՜հա իմ սկզբունքը...Բայց թե ի՞նչու է ապրում հասարակությունը, ի՞նչ է մարդկության նպատակը, ի՞նչ է կյանքի իդեալը- ահա՛ ինձ տանջող մտքերից մի քանիսը... »: [4]

Կարդալով և վերլուծելով մեծ մտածողների գործերը՝ խորհում ու գրի է առնում նրանց և իր սեփական դատողություններն ու խորհրդածությունները՝ հաճախ խտացումների ձևով: Իսահակյանը չի սերտում ուրիշների մտքերն ու բանաձևումները. նա ճգնում է ինքնուրույն լուսաբանել դրանք, այդ պատճառով 90-ական թվականների երկրորդ կեսին՝ Իսահակյանի ուսանողական տարիների արձակը «գերազանցապես ունի

1 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան,1977, էջ 74:
2 Նույն տեղում, էջ 32:
3 Ինճիկյան Արամ, Ավետիք Իսահակյան, Եր.,1940, էջ10:
4 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 20:

աֆորիզմների, փիլիսոփայական-ֆանտաստիկ մանրապատումների բնույթ…:»[1]

Ստեղծագործելու առաջին իսկ օրվանից խտացումներն Իսահակյանի անբաժան ուղեկիցներն են եղել, ու թեպետ գրողի սրտի ու մտքի առկայծումները ստեղծվել են ինքնաբերաբար, գրողն առաջնորդվել է ուղղագնա սկզբունքով՝ նվիրվել գրականությանը, ջնջել սուտն ու տգեղը, ստեղծել ճշմարտության ու սիրո հենքով կառուցված իր աշխարհը: Սրանք, որպես կենսահորդ տրամադրություններ, իրենց տեղն են գտել ոչ միայն «Հիշատակարան» -ում, այլև «Մեծ մարդկանց մտքեր» ծոցատետրում, որը «Իսահակյանի երկերի ակադեմիականում…անպայման իր տեղը կգտնի»:[2]

Խտացումներ ստեղծելու նախասիրությունը և սկզբունքները Իսահակյանի մոտ մշակվել է դեռևս պատանեկության տարիներից: Նրա ստեղծագործական տետրերում, օրագրերում, առանին թերթիկների վրա՝ ստեղծագործությունների կողքին հանդիպում ենք դուր եկած որևէ խտացում, որը ստեղծվել հայ և այլազգի ժողովրդական բանարվեստի ուսումնասիրությունից, նրան միշտ գրավել են հայրենի գյուղի ջրաղացում լսած ժողովրդական երգերն ու հեքիաթները և «նրա առաջին ուսուցիչը եղել է… առածներով ու ասացվածքներով համեմված շիրակացու խոսքն ու զրույցը՝ առօրյա «խեր ու շառի», աշխարհի կարգ ու սարքի վերբերյալ»:[3]

Իսահակյան-արվեստագետը տեսնում է ազգայինը ազգի ոճի, երգի, բարբառի, պատկերի, բնության մեջ. «Ոճը ազգի նկարագիրն է, երբ մի ազգ նկարագիր ունի, նա չի կորչի…Ոճ ունեցող ազգը կարող է ջարդվել, բայց իբրև տեսակ, ինքնություն, ես, անհատականություն կմնա...»:[4]

Ինչպես նշում են իսահակյանագետները, «նա շատ ճամփորդել է դեռևս պատանեկան տարիքից ճամփորդելու սերը նրա մեջ նույնքան զորեղ է եղել, որքան սովորելու և և ընթերցելու սերը...»:[5]

Վարպետն իր իսկ ապրած կյանքի մասին գրել է, որ ամեն ինչ անցնում է իր սրտի միջով և անարձագանք, անանդրադարձ, անտարբեր չէր կարող կանգնել աշխարհի առաջ: Շրջագայել ու գրել է «...ոչ որպես սովորական զբոսաշրջիկ, այլ որպես հնագետ ու պատմաբան, բանաստեղծ ու փիլիսոփա՝ թափանցելով ժամանակի խորքը, հոգու աչքերի առաջ կենդանացնելով անցյալը, վերապրելով և վերաիմաստավորելով այն: Եվ

1 Արամ Ինճիկյան, Ավ. Իսահակյան, Եր.,1977, էջ 65:
2 Իսահակյան Ավիկ, Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ, Երևան, 2001,էջ 476:
3 Ինճիկյան Արամ, Ավ. Իսահակյան, Եր. ,1977 էջ 63:
4 Իսահակյան Ավիկ, Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ, Երևան, 2001,էջ 64:
5 Ինճիկյան Արամ, Ավ. Իսահակյան, Եր. ,1977, էջ 65:

իր տպավորություններն ու խոհերն էլ հաճախ, նա գրի է առել թափառումների ժամանակ՝ Արագածի և Մոնբլանի լանջերին, Սևանի և Լեմանի ափերին, Անիի և Պարթենոնի ավերակների վրա...»:[1]

Ապրելով, սովորելով Եվրոպայի առաջադեմ քաղաքներում, ուսումնասիրելով անտիկ շրջանի գրողների աֆորիստիկայի թեմանատիկան և ազդվելով դրանցից՝ Իսահակյանը ստեղծել է քաղաքական, պատմական, փիլիսոփայական, քննադատական, երգիծական և հումորային թեմատիկայով խտացումներ, որոնք աչքի են ընկնում խորությամբ և կարճուկտրուկայնությամբ.«Ով սիրտ ունի, նա կհասկնա և տիեզերքը, և կյանքը, և ճշմարտությունը»[2]

Համեմատելով Վարպետի խտացումների թեմատիկան՝ կտեսնենք տարբեր նրբերանգներով արտահայտված համամարդկային, արդիական մտքեր, որոնք մղում են ընթերցողին խորհելու.«Ո՞րտեղից է եկել մարդը, ի՞նչ ուղիներ է կտրել, ի՞նչ կյանքով է ապրել, ո՞ւր է գնում վերջը, վերջը, վերջը-ոչ ոք չգիտե...»[3]

Բավականին դժվար էր Իսահակյանի համար դարասկզբի դաժան իրականության պայմաններում բացել իր ազնիվ հոգին և գեղեցիկի, ճշմարության, ստի, ազատության, ամոթի փիլիսոփայական ձևակերպումներ տալ. «Ճշմարությունը, եթե գեղեցիկ չէ, նա ճշմարություն չէ... »[4]

Նման փիլիսոփայական աֆորիզմ ունի Դեմոկրիտուսը, ով գտնում է, թե անկեղծությունը բնորոշ է ազատությանը, իսկ սուտը ՝ ստրկությանը: Այլ կերպ այս միտքը ներկայացնում է Մ. Գորկին, թե սուտը ստրուկների կրոնն է, ճշմարտությունը ազատ մարդկանց աստվածն է: Իսահակյանի ազատատենչ հոգին ըմբոստանում է. «Ազատությունը ի՛նչ է-ազատությո՞ւն կուզեմ ես»[5]. սա է այն կարծր հիմքը, որ վրա Վարպետը ցանկանում է հանգչել ու անեծք թափել բիրտ հասարակության վրա:

Փառքի, մեծ մարդ լինելու ձգտում չունի Իսահակյանը. տխրության մշուշով պատված՝ ուզում է միայնանալ ու մտածել, թե կյանքն ինչու է մարդուն դարձնում անզգա, անմիտ, ոոպեական ապրող, այնուհետև հավելում է. «Ինքնաբավականությունը ամենալավ զգացմունքներից է, եթե իր հիմքը ճշմարտությունների վրա լինի»:[6]

Մարդու կենսափորձը, զգացմունքների աշխարհը, արարքները միշտ են եղել Իսահակյանի ուսումնասիրության ծիրում. «Աշխարհը նույնն է իր

1 Նույն տեղում, էջ 66:
2 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 212:
3 Նույն տեղում, էջ 258:
4 Իսահակյան Ավիկ, Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ, Երևան, 2001,էջ 324:
5 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 160:
6 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 213:

էությամբ, ձևերն են փոխվում հավիտենական իրերի: Մարդիկ՝ նոր մարդիկ, նոր ձևեր, նոր ծառեր -նոր ձևեր: Մարդը նույնն է, անհատն է նորը: Հնի տեղը նորն է գալիս, նորն է բուսնում, նորն է բռնում հին տերևի, հին ծառի, հին աշխարհի, հին մարդու տեղը...»:[1]

Մարդկային հոգու, ամոթի և ինքնաճանաչման զարմանալի գունեղ ու ինքնատիպ, հստակ և լակոնիկ մտքեր են ձևակերպել հայ և համաշխարհային գրական դեմքերը: Օրինակ՝Դեմոկրիտուսի միտքը, թե պետք է ամաչել ինքդ քեզանից այնպես, ինչպես և այլ մարդկանցից, և չանել վատ արաքներ, անկախ նրանից, թե դա անհայտ է մնում, թե բոլորը գիտեն դրա մասին, լրացնում է Իսահակյանը. «Ճանաչեցեք ձեզ, որ կարողանաք ուրիշներին սիրել...Օ՜, մարդի՜կ, գիտցեք, որ դուք ուրիշի մեջ ուրիշին չեք սիրում, ուրիշի մեջ դուք ձեզ եք սիրում»:[2]

Իսահակյանի պատկերացումներն ու հայացքներն իր կյանքի իմաստի և երջանկության մասին շատ հաճախ ոչ միայն չէին համընկնում իրականության հետ, այլև ուղղակի հակասում էին նրան. երբեմն դրանք ազդում էին գրողի տրամադրության ու զգացողության վրա: Ինքնաքննությունն ու հասարակության մեջ իր տեղի ու դերի որոշման մտածմունքները ստեղծեցին մտքի և զգացմունքի յուրահատուկ թռիչքներ. «Պետք է սիրել, սիրել աշխարքը, արևը, լուսինը, աստղերը, ծովերը, երգը, հովը, ծաղիկը, մարդը, որպեսզի սիրենք կյանքը»:[3]

Իսահակյանը չի ուզում տեսնել անգույն, ցանցառ, ծանծաղ, թեթև մարդու, այլ ուզում է իր կողքին լինեն խորը, անհուն, փարթամ սրտով մարդիկ. «...Խորություն՜ն, խորություն՜ն, խորություն՜ն-ահա՜ այս է մարդու արժեքը»[4]

Պետք է ընդգծել, որ իսահակյանական խտացումների թեմաները, որոնք սովորաբար ուղղված են «հավերժական հարցերին», հաճախ ներառում են մտքեր, որոնք այսօր էլ նորովի են հնչվում և մտապահվում.«Առանց սրտի չկա խորը և շիտակ միտք. - առանց մտքի չկա խորը և ջերմ զգացմունք»:[5]

Փիլիսոփա-գրողն ունի երջանկության իր ուրույն բանաձևումը. «Աշխարհը պիտի սրտովդ լինի, քեզ հաճույք պատճառե, քեզ չխոցե, այլ գուրգուրե, փայփայե, լիացնե, երջանկացնե»:[6] Իսկ Սենեկան երջանկության մասին գրում է, թե ձգտելով երջանկացնել ուրիշներին, մենք փորձում

1 Նույն տեղում, էջ 386:
2 Նույն տեղում, էջ 160:
3 Նույն տեղում, էջ 223:
4 Նույն տեղում, էջ 155:
5 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 96:
6 Նույն տեղում, էջ 420:

ենք գտնել մեր սեփական երջանկությունը, Լ.Տոլստոյն էլ երջանկությունն ուրիշների համար ապրելն է համարում:

Ողջ բնությունն ու կյանքը մի դպրոց է Իսահակյանի համար, իսկ գրքերը մարդկության փորձերի խորհրդավոր պատմություններ են.«ուր գաղտնիք ու խորհրդավորություն չկա-պոեզիա էլ չկա»[1] և մարդն այդ գրքերը քննելով պիտի սովորի. «Բանականությունը, խելքը, որ որոնում է մենակ ճշմարտություն, հիմքեր, պատճառներ... լույս ու ուժ ու իրավունք տվողն է»:[2] Արիստոտելն էլ գտնում է, որ խելքը ոչ միայն գիտելիքն է, այլև այն գործնականում կիրառելու ունակությունը:

Իսահակյանը ստեղծագործելու կարևոր հատկանիշներից է համարում է մտքի և զգացմունքի ներդաշնակությունը, որոնք միմյանց շարունակությունն են, եթե մարդն ունի մտքեր, գաղափարներ, ապա փիլիսոփա է, նա պետք է մտածի ու ստեղծի ու եթե մտածում է, ապա զգում է մտքի իսկական էությունը.«Եվ իմ ողջ գիրքը, որ չքնաղ հյուսվածք է, տիեզերքի պես պիտի լինի- նրա միջով ես կանցընիմ իմ զգացածը, մտածածն ու ցանկացածը...»:[3] Մտքի և սրտի մասին Ռոմեն Ռոլանը գրում է, որ մարդու մտքի արժեքը որոշվում է իր իսկ կատարած գործողության չափով:

Վարպետի խտացումների թեմաներն արտացոլում են մարդկային անհատականության, նրա հոգեկան աշխարհի, մտորումների բոլոր եզրերը իրենց զարգացման մեջ: Իր զգայական ու խոհական աշխարհով, իր սրտով ու սիրով նա հուզում է, ապրելու և խորհելու հնարավորություն տալիս.«Սի՜րտը- տեղ կա արև կդիպնի, և մարդ ոգևորված է, տեղ կա լուսին կդիպնի՝ լուռ է ու մտախոհ, մտորող, տեղ կա խավար, խոնավ, մութն է պատել, և մարդը հուսահատված է. տեղ կա փոթորիկ կա և մարդը զայրացած է, տեղ կա անձրև կուգա՝ մարդը լալիս է, տեղ կա ծիածան ու հովիկ կա՝մարդը կհուզա ու կերգե...»[4]

Ավ. Իսահակյանը մեծ մտածող է ու բանաստեղծ, իսկ փիլիսոփան ու պոետը, ինչպես ինքն է ասել, միաժամանակ են մտածում, նրա սիրտը զգում է, իսկ երգը այդ զգացողությունը հայտնում է աշխարհին.«Ուզում եմ ապրել, որովհետև սիրտս դեռ ամբողջ է- կարող է սիրել, ուրախանալ, ու հրճվել ու թրթռալ»:[5]

Իսահակյանի փիլիսոփայական մտածողության առանցքը ժամանակի հասկացությունն է. նրա կարծիքով՝ կա մի բան, որը մարդուց կախ-

1 Նույն տեղում, էջ 151:
2 Նույն տեղում, էջ 140:
3 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 109:
4 Նույն տեղում,էջ 142:
5 Նույն տեղում,էջ 83:

ված չէ և առանձնահատուկ կախարդանք ունի.դա ժամանակն է, այն ամեն ինչ իր տեղն է դնում: Գրողը սիրում է ժամանակը, որի ընթացքում դառնում է փորձառու, խելացի և իմաստուն: Ժամանակի հոլովույթում է հղկվում մարդկային հոգին.«Այդպես է մեր հոգին՝ ոգևորվում է, այրվում է, ծրագրում, ձգտում, տանջվում, կռվում, վառվում…և մարում…»[1]

Հուզառատ բանաստեղծի կարծիքով՝ ժամանակը հոյակապ ուսուցիչ է. մեզ ուղղորդում է այն ճանապարհով, որը մենք ենք ընտրում: Ժամանակի միջով են անցնում սերն ու հիասթափությունը, նվիրվածությունը, ընկերությունը. երևույթներ, որոնք մենք այնքա՞ն շատ ենք արժևորում: Ժամանակը մեզ օգնում է հասկանալ ճշմարտությունը և գնահատել կյանքը.այն երբեք կանգ չի առնում, կյանքը մշտապես զարգանում է և մարդկային փոխհարաբերությունները անընդհատ փոփոխվում են. «Օ՜, ես դարձյալ կհուսամ, կսիրեմ, կտանջվեմ, ժամանակը կարող է փոխել մարդկային սիրտը՝ ապառաժը սպունգ դարձնել…»:[2]

Ժամանակը լռում է, մտորում է Վարպետը, և չգնահատվելու դեպքում անպայման թողնում է մի բուռ հիշողություն, մի քանի բաց թողնված հնարավորություն և անցյալի մոխրագույն վարագույր: Ժամանակը միշտ քիչ է, այդ պատճառով այն բոլոր գանձերից ամենաթանկարժեքն է.«…Անհուն ժամանակը տիեզերքի հավերժության մեջ պիտի կշռե միայ մի վայրկյան և ո՜չ ավելի…»:[3]

Իսահակյան-փիլիսոփան կարևորում է նաև ժամանակի անցողիկությունը. ամենաանդառնալի կորուստներից մեկը ժամանակի կորուստն է, այն արագ անցնում ու սպառվում է, և հաճախ մենք չենք կարողանում ճիշտ օգտագործել մեզ տրված ժամանակը: Գրողը իրավացիորեն նկատել է՝ ոչ ոք չգիտի, թե որ ժամանակահատվածն է իրեն հատկացվում ապրելու համար և եթե ինչ-որ բանի ձգտում ես, ինչ-որ բան ես ուզում և փափագում բոլորից վեր, նույնիսկ մեկ կորած րոպեն կարող է դառնալ ճակատագրական.«…երբ զգում ես ժամանակը…, թվում է, թե մի վայրկյան էր օրը»:[4]

Ժամանակի արագանցողիկությունը դարձել է բարոյափիլիսոփայության և քնարգության սկզբունքներից մեկը: Նման մտքերն անընդհատ անհանգստացնում են թե՛ փիլիսոփա-ստեղծագործողներին, թե՛ հասարակ մարդուն: Այդ մասին գրել է Թեոփրաստեսը , ասելով՝ անմահ ոչինչ չկա ժամանակից բացի, ամեն բան եկել ու գնացել է, կգա ու կգնա: Ժա-

1 Նույն տեղում,էջ 107:
2 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 48:
3 Նույն տեղում,էջ 421:
4 Նույն տեղում,էջ 426:

մանակի մասին հետաքրքիր միտք ունի Վոլտերը, ով գտնում է, որ բոլոր մարդիկ անտեսում են այն, հետո էլ բոլորը ափսոսում են դրա կորստի համար: Հարցը ժամանակի անողոքությունն ու անդադար ընթացքը չէ, մտորում էր Միգել դե Ունամունոն, այլ թե ինչպես են անցնում տարիները՝ անհետ կորչելով հավիտենության մեջ: Բոլոր մտածողները բացահայտում են ժամանակի ճշմարտությունը, և նրանց համար դա միշտ չէ, որ հաճելի է: Ի վերջո, ընկալման այդ պահը միանգամից դառնում է անցյալ. ժամանակը անընդհատ հոսում է և իր ազդեցության տակ ամեն ինչ փոխում:

Իսահակյանի կարդացածի, տեսածի, ու ապրածի ընդհանրացումները՝ հրաշալի խտացումներն են, որոնք «մենք ՝ պարզ մահկանացուներս ենք հաղորդակցվել ու մեզ համար հայտնաբերել նրանց իմաստուն մտքերը...»:[1] Իսահակյանի խտացումներում «Մարդ» արժեքի բարձրագույն ըմբռնման մեջ բացվում է կարևոր խնդիրներից մեկը՝ գրագետ ապրելու և արարելու երջանկությունը. «Կուլտուրան՝ մարդկային հոգու այդ երգը, այն թևն է, որով մենք թռնում ենք դեպի անհուն...»:[2] Մարդը ծնվում է լինելիության խորհրդով, կեցության համառությամբ. առեղծված թվացող մարդկային ճակատագրի, բնավորության, արարքների մասին իսահակյանական ինքնատիպ ու փիլիսոփայական խտացումները անտարբեր չեն թողնում ընթերցողներին. «Մարդկանց հազարից մեկը հազիվ ազնիվ ու բարի լինի, անկեղծ ու բարձր. հազիվ հազարեն մեկի գործերի, զգացմունքերի շարժառիթը ազնիվ ու մարդասեր լինի-սեփական շահից ազատ լինի...»:[3]

Որքան հարուստ է անհատի հոգևոր աշխարհը և որքան բարձր է նրա զարգացման մակարդակը, այնքան խորը, հարուստ և ճշմարիտ են նրա հայացքներն ու զգացողությունը, հետևապես, այնքան լիարժեք է և՛ նրա կյանքը, և՛ այդ կյանքի վայելքը: Այդ անհատներից է Ավ. Իսահակյանը, ում կյանքի և մահվան հիմնախնդրի բոլոր երևէջները՝ արտահայտված խտացումներով, նրա փիլիսոփայական, գեղարվեստական մտքերի ու աշխարհայացքի յուրօրինակ բանաձևումներ են: Ապրելու համար մարդու հոգին պետք է այնքան բարձր ու թևավոր լինի, «որ կարողանա մասնակից լինել, հասկանալ տիեզերական անուրջին, տիեզերքի անուրջին...»:[4]

Մարդաբանական հարցադրումների տեսանկյունից Ավ. Իսահակյա-

1 Գևորգ Աբաջյան, Ավետք Իսահակյանը և հայոց ողբերգությունը, Երևան, 2001, էջ 266:

2 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 258:

3 Նույն տեղում,էջ 89:

4 Նույն տեղում,էջ 278:

նը փիլիսոփայորեն քննում է կյանքի և մահվան հիմնախնդրի բոլոր երևէջները։

Մահվան հիմնախնդիրը սերտորեն կապված է մարդու գոյության և ժամանակի արդյունավետության իմաստավորման ու բացահայտման հետ։ Գրողը սահմանում է ինչ են գոյությունն ու չգոյությունը, կյանքը և մահը և մարդկային կյանքի իմաստով է պայմանավորում մահվան և անմահության ըմբռնումը.«Ժամանակի հետ կամ նրանից առաջ գնում ենք մի հույսով ոգևորված, և ահա՛հատվեց կյանքի թելը-մռայլ գերեզման»։[1]

Չեն հասկանում իրենց կյանքի կորուսյալ իմաստը, մտորում է Վարպետը, չեն կարողանում ազատվել իրենց ոչնչացնող «աբսուրդից», հոգևոր դատարկությունից։ Մարդիկ պետք է մտածեն իրենց հոգու փրկության մասին, որովհետև կյանքը հավիտյան չէ, մահվան միջոցով նրանք երկրային կյանքից անցում են հանդերձյալ, հոգևոր, հավերժական կյանքին.«Ապրել են ուզում, կարծես, հավիտյան են ապրելու։ Բայց ապրողը այդպես է զգում. Անմահ…»։[2]

Կյանքի և մահվան իմաստի հարցերը պարզաբանելիս Իսահակյանը տալիս է մահկանացուին բնորոշ բազմաթիվ դիտարկումներ.բնական ահը անխուսափելի է, սակայն անխուսափելիությունը գիտակցելով չպետք է մարդն իրեն վերապահի անմարդկային արարքներ.«Աշխարհ եկանք, որ տեսնենք այս ամեն զարհուրանքները և մեռնենք՝ զգալով բոլոր հավերժական զարհուրանքը…»։[3]

Մարդն, ըստ Իսահակյանի, այնպիսի էակ է, որի աստվածային էությունը բացահայտվում է ինքնակատարելագործման, հոգևոր, մշակութային աշխատանքի ընթացում։ Հոգևորի, աստվածայինի, հավերժականի մեջ մարդու համար մահը գոյություն չունի.մահվամբ կյանքը չի վերջանում, չի ավարտվում, այն շարունակվում է այլ՝ ավելի կատարյալ ձևով։ Այդ հավատը մարդկանց հույս է տալիս, լավատեսություն է ներշնչում, մեղմացնում է մահվան ողբերգականությունը, մարդկանց վախն ու վիշտը.«…պիտի սիրել կյանքն ու մահը, պիտի ատել կյանքն ու մահը»։[4]

Մարդու կեցության և մահվան հիմնախնդրի իսահակյանական լուծումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կենսասեր գրողը տեսնում և երբեմն տենչում է հոգնաթախանձ կյանքի ավարտը.մարդը բնական էակ է և նրա մահվամբ կյանքն ավարտվում է։ Նա մեկ անգամ է

1 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 51։
2 Նույն տեղում,էջ 385։
3 Նույն տեղում,էջ 422։
4 Նույն տեղում,էջ 110։

աշխարհի գալիս և այն, ինչ անելու է, պետք է անի իր կյանքի ընթացքում, այլապես «մահը ամեն բանի կնիքն է. կնքում է ամեն բան»:[1]

Հոռետեսությունից լավատեսություն իսահակյանական թռիչքը նկատելի է նրա ապրելու հզոր կամքի արտահայտմամբ: Նրա կենսապաշտ խտացումներում երևում են ստեղծագործական-արարչական արժեքները. մարդու կյանքն իմաստավորվում է աշխատանքով, նորի ստեղծմամբ, գեղեցիկի հանդեպ սիրով: Մտածմունքը մահվան մասին, կրքերի հաղթահարումը, ինքնաարարումը, առաքինությունը կյանքը դարձնում են իմաստալից սրբագործված: Լինելով իր նախնիների շարունակությունը՝ նա միաժամանակ իր ժառանգներին է փոխանցում համամարդկային ավանդույթներն ու հոգևոր մշակույթը.«...կյանքի, ապրելու կամքը, փափագը մարդկային և կենդանական և բուսական արարածների էությունն է կազմում»:[2]

Իսահակյանի կենսահաստատ համակարգում մարդը կարող է և պետք է իմաստավորի իր կյանքը, գոյության ցանկացած պայմաններում գտնի արժեքներ, ասել է թե, մարդը հաղթահարում է մահն իր մեծ ու բարի գործերով, մարդկանց համար երախտապարտ օգտակար ու պիտանի գործունեությամբ՝ հավերժանալով հետագա սերունդների կյանքում և հիշողության մեջ. «Պետք է աշխատել, տոկալ, համբերել և մաքառել... Դրանով միայն կարելի է հաղթել չարին, մահին...»:[3]

Վարպետը լավատեսորեն է լուծում մարդու համար ամենացավոտ խնդիրներից մեկը՝մահկանացու լինելու հարցը, նշում է՝ մահը մարդուն ակտիվ գործունեության տանող կարևորագույն շարժառիթն է և մարդն իր կենդանությունը պետք է գնահատի և իմաստավորի, մարդու ֆիզիկական մահը կարող է ուղեկցվել հակադրությամբ՝ նրա մշակութային անմահությամբ, և այստեղ տեղին է մյուս փիլիսոփա- մտածողի՝ Հ. Թումանյանի խոսքը՝ «Գործն է անմահ, լավ իմացեք». դրա մեջ է ապրելու երանությունը, այս միտքն էլ Իսահակյանն իր խտացման մեջ ձևակերպել է այսպես. «Կյանքը ու ողջ բնությունը մի երգ է, մի վերք- մի ողջ պոեզիա՝ վառվել, փայլել շողալ, հնչվել ու մարել...»:[4]

Որքան էլ փիլիսոփա-Իսահակյանի խորհրդածություններում և ուշադրության մշտական առարկան մահվան թեման է. «Գիտակցության խորքում թաղված է մահի փաստը»[5], նա կյանքի ու մահվան իմացական խորհրդի մեջ գերազանցությունը տալիս է ապրելուն՝ ձևակերպելով յու-

1 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 336:
2 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 400:
3 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 296:
4 Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977,էջ 110:
5 Նույն տեղում,էջ 448:

որինակ կենսական բանաձև-խտացում.«Ես ուզում եմ վայելել կյանքը-լացը, վիշտը, տանջանքը, ոգևորությունը..»:[1]

Մատերիալիստ Էպիկուրը մահվան մասին գրել է, որ մարդը և մահը երբեք իրար չեն հանդիպում, որովհետեւ քանի դեռ մարդը կենդանի է, մահը չկա, իսկ երբ մահը գալիս է, մարդն այլևս չկա: Ուրեմն, նա մահից չպետք է վախենա: Իսկ իդեալիստ Սոկրատեսը ապացուցում է հոգու անմահությունը, հոգի, որն ազատվում է իր մարմնական բանտից և վերադառնում իրեն հարազատ մտքերի հավերժական աշխարհը: Մ. Գորկին էլ գտնում է՝ քանի դեռ ինքը գոյություն ունի, մահ չկա, մահը կլինի, նա չի լինի: Սպինոզան ու Ֆոյերբախը, ընդհակառակն, կյանքի և մահվան փիլիսոփայության գլխավոր նպատակն էին համարում մարդուն ապրել սովորեցնելը: Ըստ նրանց՝ այն բացահայտում է կյանքի իմաստը, ցույց է տալիս, թե որն է երջանկությունը և ինչպես հասնել դրան:

Իսահակյանի այնկողմնային աշխարհի մշտակա հիմնախնդիրների, կյանքի և մահվան փիլիսոփայության մտատանջող հարցերի պատասխանը մեկն է՝ ապրել և ստեղծագործել: Գրողն ունի ապրելու ցանկություն և քաջություն:

Իսահակյանական խտացումների վերոհիշյալ թեմատիկան ներկայացնում են մի ամբողջություն, քսաներորդ դարի մեծ բանաստեղծներից մեկի հոգևոր աշխարհը, նրա իմաստության մատյանը՝ավանդված ժամանակակից և գալիք սերունդներին:

Քնարական, արվեստի տարբեր շերտերի մասին խտացումները շարունակում են մնալ գեղարվեստական մտածողություն ունեցող գրողի մշտարծարծ խնդիրները՝ դառնալով փիլիսոփայական կողմնորոշումներ. դրանք հրաշալի, խորիմաստ մտքեր են, որոնք ունեն մանրամասն ուսումնասիրության կարիք և հնարավոր չէ մեկ աշխատանքում ներկայացնել:

Գրված լինելով բանաստեղծի ապրած կյանքի տարբեր շրջափուլերում՝ իսահակյանական խտացումները արտահայտում են «խորազգաց հեղինակի տրամադրությունների ելևէջները, հակասությունները, հույսն ու հուսախաբությունները, վիշտն ու խինդը, դեգերումներն ու հանգրվանները..»[2]

Դրանք հանկարծակի հայտնվում են ընթերցողի մտքում և հոգում, գործում՝ կայծակնային արագությամբ և թողնում իրենց անմոռանալի հետքը: Բուժում են ձանձրույթից, առօրյա խոսակցություններից, փիլիսոփայական կարծրատիպերից:

1 Նույն տեղում, էջ 161:

2 Ինճիկյան Արամ, Ավ. Իսահակյան, Եր. ,1977, էջ 67:

Թվում է՝ տեղին հնչեցրած խտացումները մեր կյանքը լցնում են նոր գույներով, նոր իմաստով, որոնք մենք չենք նկատել, բայց մեզ այնքա՜ն անհրաժեշտ են:

Բ.գ.թ. Նունե Մկրտչյան – հետաքրքրության ոլորտը՝ հայ նոր և նորագույն գրականություն: Գիտական մամուլում հրատարակել է տասնյակ հոդվածներ և մենագրություն:

Nune Mkrtchyan - Avetik Isahakyan is Master of Aphorisms - There are few writers in the world literature who, through their aphorisms, would be able to penetrate into the deep layers of the psyche and consciousness of the people and present the philosophical results of their creative work and worldview, thereby turning aphorisms into an inseparable part of thought and speech.

Aphorism is a rare genre in the Armenian literature, it is almost not studied. Av. Isahakyan a philosopher, a poet and a writer, was one of the rare writers, whose thinking was inherent in aphorism. Moreover, the Master is an exception: “not a single Armenian writer created so many aphorisms.”

The purpose of our study is to present the theme of aphorisms of Avetik Isahakyan: from the native land to the Cosmos, from the history to the reality, from an illusion of the past to a dream of the future - which discusses the themes of the native language and folklore, the Armenian and world literature, art and science, man and nature, life and death, love and suffering. “The first steps of a person’s spiritual development are associated with the poetry, the middle of the path should pass through science and the solution of secrets, and the last steps will again begin with poetry,” Avetik Isahakyan wrote.

We consider the valuable studies of N. Aghbalyan, M. Berberian, E. Jrbashyan, G. Tamrazyan, A. Inchikyan, A. Mushegyan, G. Abajyan dedicated to the Master as original. In their articles and monographs, literary critics turned to the pearls of the thought of the great thinker, philosopher and writer Av. Isahakyan, which over the time started being perceived as truth, winged words, and then moved to the next generations. The large-scale work of Avik Isahakyan entitled “Avetik Isahakyan, Aphorisms” should be mentioned, here the indefatigable literary critic worshiping Isahakyan not only summed up the results of the writer’s aphorisms, but also classified, analyzed and presented the Master’s aphorisms, which became an expression of the reader’s cherished aspirations.

According to G. Abajyan, “The name “APHORISMS” has been chosen by the poet himself; it is the same as a maxim, a sentention, a winged word.”

Isahakyan’s aphorisms are rich in thin thoughts and feelings, diverse in the forms of expression: they do not prove, do not argue, but subtly affect the human heart and consciousness. “Life, life and to love life: to wander, love, think, act, ponder, fight ...

to love mother, father, sons ... have friends ... This is the life – poetry- life," Isahakyan thinks.

The Master each time found a new word, a new form, new ways of expression of the painful thoughts that agitated his soul: "When You look at this bright sun, at the green mountains, at the murmuring and gleaming river, at flowers and birds, You forget that there is death, illness.. .."

The aphoristic style was, in essence, the favorite style of Av. Isahakyan, his aphorisms are highly artistic samples of brilliant brevity, his lines are full of philosophical reflections, the most various thoughts. "He concentrates by squeezing, but ... .. does not weaken."

The topicality of the topic of the research is conditioned by the increased interest in aphorisms during the recent years. This can be explained not only by the inexhaustible interest in the creative work of Isahakyan, the artistic reality created by him, but also by the fact that the aphorisms, i.e. the compressed expressions of thought, ideally correspond to the needs of the human soul in any epoch and allow to express in an artistic form a person's attitude towards reality, towards personal and public life. "Love humanity and You will be as big as humanity. Love the Universe and You will be as large as the Universe."

In order to present the aphorisms of the Master, we applied an analytical-comparative method, the method of literary commentary, which allowed us to consider Isahakyan's aphorisms on the topics: they have not been studied sufficiently up to now.

The aphorisms presented by us have been taken from the lyric-philosophical confession - Isahakyan's "Diaries", notebooks, diary notes, the book "Avetik Isahakyan, Aphorisms". We wanted to present: "For the younger generation, for the youth, life is endless, interesting, beautiful and stable."

Isahakyan's aphorisms written in the different periods of the poet's life express "ups and downs of mood, contradictions, hope and disappointment, sorrow and joy, wandering and haven of a deeply feeling person," Aram Inchikyan writes.

They suddenly - at a lightning speed – appear in the mind and soul of the reader, in his business and leave their unforgettable trail. They cure boredom, household conversations, save from philosophical stereotypes.

It seems that the aphorisms that sounded to the place fill our lives with new colors, new sense, that we did not notice, but which we needed so much.

Key words: *Avetik Isahakyan as a philosopher, a poet and a creator, the themes of aphorisms, an illusion of the past, a dream of the future, oral folk art*

Нуне Мкртчян - Аветик Исаакян – мастер афоризмов - В мировой литературе мало писателей, которые посредством своих афоризмов сумели бы проникнуть в глубинные пласты психики и сознания народа и представить

философские итоги своего творчества и мировоззрения, тем самым превратив афоризмы в неотделимую часть нашей мысли и речи.

Афоризм – редкий жанр в армянской литературе; он почти не изучен. Ав. Исаакян, философ, поэт и писатель, был одним из редких писателей, мышлению которого была присуща афористичность. Более того, Мастер являлся исключением: «ни один армянский писатель не сочинил столько афоризмов».

Цель нашего исследования — представить тематику афоризмов Ав. Исаакяна: от родного края до космоса, от истории до реальности, от иллюзии прошлого до мечты о будущем – в которых рассматриваются темы родного языка и фольклора, армянской и мировой литературы, искусства и науки, человека и природы, жизни и смерти, любви и страданий. «Первые шаги духовного развития человека связаны с поэзией, середина пути должна пройти через науку и разгадку тайны, а последние шаги опять начнутся с поэзии», — писал Аветик Исаакян.

Мы считаем самобытными ценные исследования Н.Агбаляна, М. Берберяна, Э. Джрбашяна, Г.Тамразяна, А. Инчикяна, А. Мушегяна, Г. Абаджяна, посвященные Мастеру. В своих статьях и монографиях литературоведы обращались к жемчужинам мысли великого мыслителя, философа и писателя Ав. Исаакяна, которые со временем стали восприниматься как истинные, крылатые слова, а затем перешли к следующим поколениям. Отметим масштабный труд Авика Исаакяна «Аветик Исаакян, афоризмы», где преклоняющийся перед Исаакяном неутомимый литературовед не только подвел итоги афоризмам писателя, но и классифицировал, проанализировал и представил афоризмы Мастера, ставшие выражением заветных чаяний читателя.

Как отмечает Г. Абаджян . «Название «АФОРИЗМЫ» (“Խտացումներ”) выбрал сам поэт; это то же, что и максима, сентенция, крылатое слово».

Афоризмы Исаакяна богаты тонкими размышлениями и чувствами, разнообразны по формам выражения: они не доказывают, не спорят, а тонко воздействуют на человеческое сердце и сознание. «Жизнь, жизнь и любить жизнь: скитаться, любить, думать, действовать, размышлять, бороться... любить мать, отца, сыновей... иметь друзей... Это и есть жизнь – поэзия- жизнь-”, - считает Исаакян.

Мастер каждый раз находил новое слово, новую форму, новые способы выражения волновавших его душу мучительных мыслей: «Когда смотришь на это яркое солнце, на зеленые горы, на журчащую и поблескивающую речку, на цветы и птиц, забываешь, что существует смерть, болезни...»

Афористичный стиль, по сути, был излюбленным стилем Ав. Исаакяна, его афоризмы являются высокохудожественными образцами гениальной краткости, его строки полны философских раздумий, самых разнообразных мыслей. «Он сжимая концентрирует, но ….. не ослабляет».

Актуальность темы исследования обусловлена возросшим в последние годы интересом к афоризмам. Это можно объяснить не только неиссякаемым

интересом к творчеству Исаакяна, созданной им художественной реальности, но и тем, что афоризмы – сжатые выражения мысли - идеально соответствуют потребностям человеческой души в любую эпоху и позволяют в художественной форме выразить отношение человека к действительности, к личной и общественной жизни. «Возлюби человечество - будешь таким же большим, как человечество. Возлюби вселенную - будешь таким же большим, как вселенная».

Для того, чтобы представить афоризмы мастера, нами был применен аналитико-сопоставительный метод, метод литературоведческого комментария, которые позволили рассмотреть афоризмы Исаакяна по темам: они до сих пор недостаточно изучены.

Представленные нами афоризмы взяты из лирико-философской исповеди – “Дневников” Исаакяна, записных книжек, дневниковых записей, книги «Аветик Исаакян, афоризмы» . Мы хотели представить: «Для молодого поколения, для молодежи, жизнь бесконечна, интересна, красива, стабильна».

Написанные в разные периоды жизни поэта, афоризмы Исаакяна выражают «подъемы и спады настроения, противоречия, надежды и разочарования, печали и радости, блуждания и пристанища глубоко чувствующего человека», - пишет Арам Инчикян.

Они внезапно - с молниеносной скоростью –возникают в сознании и душе читателя, в его деле и оставляют свой незабываемый след. Они излечивают от скуки, бытовых разговоров, спасают от философские стереотипов.

Кажется, что прозвучавшие к месту афоризмы наполняют нашу жизнь новыми красками, новым смыслом, которые мы не замечали, но которые были нам так нужны.

Ключевые слова: *Ав. Исаакян как философ, поэт и творец, тематика афоризмов, иллюзия прошлого, мечта о будущем, устное народное творчество*

Գրականության ցանկ

1.Ինճիկյան Արամ, Ավ. Իսահակյան, Երկեր, Երևան, 1977:

2.Горький М., Избранные произвдения, т. 2.

3. Իսահակյան Ավիկ, Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ, Երևան, 2002:

4. Աբաջյան Գևորգ, Ավետիք Իսահակյանը և հայոց ողբերգությունը, Երևան, 2001:

5. Իսահակյան Ավետիք, Հիշատակարան, Երևան, 1977:

6. Չօպանեան Ա., Դեմքեր. Աւետիք Իսահակեան, Փարիզ, 1936, հ. 4:

7. Ֆրանգեան Ե., Ֆ. Նիցշէ և նրա փիլիսոփայութիւնը, Փիֆլիս, 1910:

DOI: 10.54503/1829-0116-2022.1-39